



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

01.01.2023թ.

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ, սիրելի կոտայքցիներ, ես մեկ տարի մոտենում է իր ավարտին:

2022 թվականը մեր երկրի համար շարունակեց ուղեկցվել փորձություններով, մարտահրավերներով, որոնք փորձեցինք և շարունակելու ենք հաղթահարել մեր ամենօրյա աշխատանքով, աշխատասիրությամբ ու Հայաստանի Հանրապետության հանդեպ մեծագույն սիրով ու պատասխանատվությամբ:

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային լուրջ սպառնալիքներին զուգահեռ, չենք կարող չառանձնացնել ու չնշել այն բարեփոխումները, ծրագրերը, որոնք իրականացվել են անցնող տարում և որոնք մեր քաղաքացիների կյանքի որակի բարելավմանն էին ուղղված:

2022 թվականին պետական բյուջեով, կառավարության սուբվենցիոն ծրագրերով ու համայնքային միջոցներով մեր մարզում կյանքի ենք կոչել սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր՝ մանկապարտեզների կառուցումից մինչև ճանապարհաշինական լայնածավալ աշխատանքներ, կարևոր ենթակառուցվածքների արդիականացում: Բազմաթիվ ծրագրեր այս պահին էլ շարունակվում են:

Միևնույն ժամանակ հայրենակիցներ,

Բնականաբար, 2023 թվականը դիմավորում ենք նոր սպասումներով, անսահման հավատով ու մեկ միասնական, անսասան ցանկությամբ, որպեսզի նոր տարին մեր երկրի համար լինի ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ տարի:

Մեզ համար խաղաղությունը դարձել է օդ ու ջրի պես անհրաժեշտ, իսկ Հայաստանի Հանրապետությունը եղել և շարունակում է լինել ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍԵՐ, որի շուրջը պիտի համախմբվենք, միաբանվենք, որին պետք է հավատանք, փայփայենք, հանուն որի պիտի պայքարենք, ապրենք, արարենք ու մեր տքնաջան աշխատանքով հզորացնենք ու զարգացնենք մեր մի բուռ, բայց անչափ ՋԵՐՍ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԸ:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Մեր, խաղաղություն ձեր ընտանիքներին:

Խոնարհում հայրենիքի խաղաղության համար նահատակված մեր բոլոր հայորդիների հիշատակին և փառք այս պահին սահմանը հսկող մեր բորոր զինծառայողներին:  
Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ